Արձանագրություն N 2
ՀՀՀ-ԳՀԾՁԲ-18/6 ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի (ARMEPS) միջոցով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի բացման նիստի

ք.Երևան 13 դեկտեմբերի 2018թ.
Ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝	Ա. Հակոբյան
Հանձնաժողովի բացող անդամներ՝	Ս. Մկրտչյան
	Մ. Հովհաննիսյան
Հանձնաժողովի գնահատող անդամներ՝	Հ. Օհանջանյան
	Հ. Ղազազյան
Հանձնաժողովի քարտուղար՝	Հ. Նավասարդյան

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը
(Ա. Հակոբյան)

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.
1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին,
2. ՀՀՀ-ԳՀԾՁԲ-18/6 ծածկագրով հայտերի բացման մասին,
3. Գնման ընթացակարգի հայտեր պարունակող ծրարների բացման մասին,
4. Գնման ընթացակարգի գնային առաջարկ պարունակող ծրարների բացման մասին,
5. Մերժված հայտերի մասին,
6. Գնահատման մասին,
7. Հարցում կատարելու մասին,
8. Գնման ընթացակարգի հրավերով նախատեսված՝ որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի (տեղեկությունների) ներկայացման մասին,
9. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝0

2. ՀՀՀ-ԳՀԾՁԲ-18/6 ծածկագրով հայտերի բացման մասին
(Ա. Հակոբյան)

1. Սահմանված ժամկետում, սահմանված կարգով հայտ է ներկայացրել հետևյալ կազմակերպությունը.

1	«Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ
2	«ԲԻ-Դի-Օ Արմենիա» ՓԲԸ
3	«Գրանթ Թորնթոն» ՓԲԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝0

3. Գնման ընթացակարգի հայտեր պարունակող ծրարների բացման մասին
(Ա. Հակոբյան)

Մասնակիցների կողմից ներկայացված ծրարում Հրավերով սահմանված փաստաթղթերը առկա են:

Մասնակիցների կողմից ներկայացված ծրարներում փաստաթղթերը կազմված են գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, բացառությամբ «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ի. Հրավերով սահմանված բոլոր փաստաթղթերում բացակայում են էլեկտրոնային թվային ստորագրությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝0

4.Գնման ընթացակարգի գնային առաջարկ պարունակող ծրարների բացման մասին

(Ա. Հակոբյան)

Մասնակիցների կողմից առաջարկած պայմանագրի կատարման գինը հետևյալն է.

Հ/Հ	Մասնակցի անվանումը	Յուրաքանչյուր մասնակցի հայտով ներկայացված գները ՀՀ դրամ			
		Գինն առանց ԱԱՀ	ԱԱՀ	Ընդհանուր	Նախահաշվային գին
1	**Աուդիտորական ծառայություններ**				5 000 000
1	«Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ	3 350 000	670 000	4 020 000	
2	«ԲԻ-Դի-Օ Արմենիա» ՓԲԸ	3 440 000	688 000	4 128 000	
3	«Գրանթ Թորնթոն» ՓԲԸ	3 900 000	780 000	4 680 000	

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝0

5.Մերժված հայտերի մասին

(Ա. Հակոբյան)

Համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման մասին կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի մերժել «Գրանթ Թորնթոն» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտը:

6.Գնահատման մասին

(Ա. Հակոբյան)

Առաջին տեղ զբաղեցնող մասնակցին որոշելու համար կիրառված չափանիշ հայտ ներկայացրած և բավարար գնահատված մասնակիցներից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

Առաջարկված հայտի հիման վրա հանձնաժողովը որոշեց.

Հ/Հ	Մասնակիցը	Չափաբաժինը
	առաջին տեղ զբաղեցնող ճանաչել՝	
1	«Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ	1,

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝0:

7. Հարցում կատարելու մասին
(Ա. Հակոբյան)

ՀՀՀ-ԳՀԾՁԲ-18/6 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացնել հարցում առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով նախատեսված՝ «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը: Ընդ որում հարցումն ուղարկվում է Lena_Najaryan@taxservice.am էլեկտրոնային փոստի հասցեին հրավերի հավելվածով նախատեսված ձևին համապատասխան՝ էլեկտրոնային նամակի պատճենները միաժամանակ ուղարկելով karine_sargsyan@taxservice.am, gayane_antonyan@taxservice.am և procurement@minfin.am էլեկտրոնային փոստի հասցեներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝0:

8. Գնման ընթացակարգի հրավերով նախատեսված՝ որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի (տեղեկությունների) ներկայացման մասին
(Ա. Հակոբյան)

Ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ սույն հրավերի 2-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովը մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝0:

9. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին
(Ա. Հակոբյան)

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ՀՀՀ-ԳՀԾՁԲ-18/6 ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի (ARMEPS) միջոցով գնման ընթացակարգի գնահատման արդյունքների ամփոփման օրը՝ ք. Երևան, Գ. Հովսեփյան 26 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝0:

Հանձնաժողովի.

նախագահ՝	Ա. Հակոբյան
բացող անդամներ՝	Ս. Մկրտչյան
	Մ. Հովհաննիսյան
գնահատող անդամներ՝	Հ. Օհանջանյան
	Հ. Ղազազյան
քարտուղար՝	Հ. Նավասարդյան